

ՅՈՒԱԿԻ ՎՏԱՐԱՆԴԻՆ

(Կոստան Զարյանի կյանքի տարեգրությունը)

Ա. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Հայ գրականության ամենաուշագրավ դեմքերից մեկի՝ Կոստան Զարյանի մասին իր կենդանության օրոք մեղանում ավելի շատ լռել են, քան խոսել։ Իսկ մահվանից հետո, ինչպես իրավացիորեն նկատում է սփյուռքահայ գրականագետ Վ. Մատթեոսյանը, այդ լռությունը «պիտի դառնար ծանր շիրմաքար»¹։

Բ. Նուրիկյանին գրած իր մի նամակում Կ. Զարյանը այն միտքն է հայտնում, որ «գրագետի բուն կենսագրությունը իր արտագրած գործերն են»²։ Եվ իրոք, արվեստագետը սերունդների հիշողության մեջ մնում է ամենից առաջ իր ստեղծագործություններով։ Սակայն նվաղ կարևոր չէ, թե գրողը կյանքը ինչ ճանապարհ է անցել, ինչ հույզերի ու մտքերի լաբիրինթոսներում են ծնվել նրա գործերը։ Կոստան Զարյանի ապրած կյանքը անսպառ աղբյուրի նման շարունակ թեմաներ է հուշել գրողին, պայմանավորել նրա ստեղծագործությունների բովանդակությունը։ Գրեթե բոլոր ուսումնասիրողները, ովքեր անդրադարձել են Զարյանի ստեղծագործություններին, շոշափել են նաև գրողի կենսագրությունը, վեր հանել մի շարք ընդհանրական եզրեր կամ փուլային գծեր, սակայն մինչև օրս չի ամփոփվել գրողի գիտական կենսագրությունը։ Պատճառներից մեկն էլ այն է, որ Զարյանի կյանքը անցել է տարբեր վայրերում ու փոփոխական հանգամանքներում, որը երբեմն անհնար է դարձրել ստույգ խոսք ասելը։ Զարյանին հաճախ են հանդիմանել աստանդական կյանք վարելու համար, բայց անվերջ տեղափոխությունները քմահաճույքներ չեն եղել, այլ կյանքի ու շրջապատի պարտադրանք։

«Կղզին և մի մարդ», «Հայրենադարձը» և այլ գործերում Զարյանը հաճախ է խոսում իր կյանքի այդ ընթացքի մասին և վկայում, որ ինքը հոգնել է այդ մեկնումներից ու թափառումներից, որ գրողի ողբերգությունն էին ու տառապանքը։ Իսկիա (Իտալիա) կղզում գրած իր գործերից մեկում Զարյանն այն միտքն է հայտնում, որ մարդ արարածը ընդհանրապես հակված է տեղափոխվելու՝ կարծելով, թե բնակավայրը փոխելով երջանիկ կլինի։ Բայց քանի որ նոր վայրը մարդուն բախտավոր չի դարձնում, նա մտածում է ոչ թե նոր տեղ գնալու, այլ՝ հետ գալու մասին։ Զարյանի ամենամեծ ցանկությունն է եղել վերադառնալ մանավանդ այն վայրը «որտեղ ծնվել է իր կյանքի առաջին տեսիլքը։ Վերադառնալ արմատին»³։

Կոստան Զարյանը ընտանիքի երեխաներից վերջինն էր՝ 19-րդը։ Նա ծնվել է Շամախիում։ Աղբյուրներով ու վարդենիներով լեցուն այդ քաղաքը հայտնի էր նաև երկրաշարժային ցնցումներով, շքեղ կանանցով ու «դարի խորքերից լսվող սարսափի ձայներով»։ Կարծիքներ են եղել, որ Զարյանը ծնվել է 1885 թ. փետրվարի 2-ին։ Ինքը՝ գրողը, իտալերեն լեզվով իր գրություններից մեկում նշում է փետրվարի 21-ը⁴։ Ըստ Շամախիի լուսավորչա-

1 Բազմավեպ, 1991, № 1—2, էջ 268։

2 Եղիշ Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Բ. Նուրիկյանի ֆոնդ, № 314։

3 Հայրենիք, Բոստոն, 1949, № 7, էջ 8։

4 ԳԱԹ, Կ. Զարյանի ֆոնդ, № 119 (այսուհետև Զարյանի ֆոնդից կատարված մեջբերումների արխիվային համարը կնշվի բնագրում)։

կան կոնսիստորիայի՝ 1894 թ. տված ծննդյան վկայականի, որ հիմնված է Ս. Աստվածածին եկեղեցու 1885 թ. չափաբերական մատյանների վրա, Կ. Ջարյանը իրականում ծնվել է նույն թվականի փետրվարի 8-ին⁵։ Հայրը հաշատուր Բեգ-Սեյթումյան-Նդիաղարյանն էր, մայրը՝ Սոնա Ստեփանյանը (ծնունդով շամախեցի)։ Գրողի ստույգ անուն-ազգանունը Կոստանդին Նդիաղարյանն է, որ հետագայում դարձել է Կոստան Ջարյան։ Ծնունդով ղարաբաղցի հայրը մասնակցել է չեքոսլովակների, լեզգիների ու թաթարների դեմ կռիվատու ցարական բանակի մղած կռիվներին և «յոթը գնդակ մխրձված մարմնի մեջ» վերադարձել։ Նա պարգևատրվել է Ս. Գևորգ խաչի բոլոր չորս աստիճաններով և թագավորի կողմից անձամբ ընծայված ոսկե ժամացույցով։ Բարձրահասակ, պնդակազմ, բարկացկոտ տղամարդ էր Ջարյանի հայրը, որ սիրում էր ճամփորդել ու զանազան գործեր նախաձեռնել։ Նա հատկապես հետամուտ էր իր երեխաների կրթության հարցերին⁶։

Ջարյանի հայրը մահացել է, երբ գրողը հինգ տարեկան էր՝ 1890-ին։ Ազգականները փոքրիկ Կոստանին տանում են Բաբու և հանձնում մի ռուս ընտանիքի։ Բաբվում Ջարյանը հաճախում է ռուսական գիմնազիա և սովորում մինչև երկրորդ դասարան։ Գ. Ստեփանյանը գրում է, որ Ջարյանը տարրական կրթությունը ստացել է Շամախիում⁷։ Բ. Նուրիկյանին գրած նամակում Կ. Ջարյանը վկայում է, որ իր նախնական կրթությունը ստացել է Բաբվում, ապա Ֆրանսիայում⁸։

Ազգականները որոշում են Ջարյանին ուղարկել արտասահման։ Մեկնելուց առաջ լինում է Թիֆլիսում, որտեղ երկու դեպք տևական հետք են թողնում Ջարյանի ներաշխարհի վրա՝ թատրոն այցելելը և հայ գրողի հանդիպելը Գալավիտսկի պոդոտայի վրա։ «...հափշտակվեցի մի մարդով, որին մայրս Ալեքսանդր էր անվանում... գեղեցիկ մաղերով, արտահայտիչ, կապույտ աչքերով, վալեիուզ կեցվածքով այդ մարդը Շիրվանդադեն էր» (121)։ Ա. Չոպանյանին գրած իր նամակներից մեկում Ջարյանը հայտնում է, որ ինքը Շիրվանդադենի մոտ ազգականն է՝ «Շիրվանը իմ մայրիկիս մորաքրոջ տղան է»⁹ և ոչ թե Ջարյանի մորաքրոջ, ինչպես գրում է Հ. հաշատուրյանը «Գրական տեղեկատուում»¹⁰ (Ջարյանի մայրիկի մյուս մորաքրոջ որդին էլ դերասան Հովհ. Արեվյանն էր)։

Փարիզում երգեցողություն սովորող կիսեղբայրը՝ Լևոնը (հետագայում ունեցավ իր երգչախումբը և ձայնագրեց հայ ժողովրդական մի շարք երգեր), տասը տարեկան Ջարյանին գնացքով իր հետ տանում է Ֆրանսիա։

Ջարյանին տալիս են Անիեր փոքրիկ քաղաքի պարոն Պտիի գիշերօթիկ դպրոցը, որտեղ բացի ֆրանսերենից, ուրիշ լեզու այլևս չի լսում (որից գրեթե ոչինչ չէր հասկանում)։ Ուսուցիչները նրան երբեմն ռուս են անվանում, երբեմն՝ կովկասցի, իսկ ավելի հաճախ՝ վայրենի։ Համատարած տաղտուկի մեջ երբեմն պոռթկում էր տան կարոտը։ «Ինձ ղրկեցեք տուն, ես ուզում եմ գնալ մայրիկիս»¹¹։ Օտար միջավայրը, ծնողազուրկ վիճակը, լեզվական անընդունելի Ջարյանի անհատականության վրա թողնում են բացասական հետևանքներ, նրան մղում ներանձնականության, Կորսված աշխարհի զգացողությունը հետագայում Ջարյանի գրականության անբաժանելի մասը պիտի կազմեր։

Ջարյանին հաճախ են փակում խցի մեջ, պատժում՝ շարունակների, հայհոյելու, ուսուցիչների հետ ընդհարվելու համար։ Գնալով է՛լ ավելի են

⁵ Շրջան, 3. III. 1995։

⁶ Հայրենիք, 1926, № 2, էջ 52։

⁷ Տե՛ս Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, Երևան, 1964, հ. Ա, էջ 323։

⁸ Տե՛ս ԳԱԲ, Բ. Նուրիկյանի ֆոնդ, № 314։

⁹ ԳԱԲ, Ա. Չոպանյանի ֆոնդ (այսուհետև՝ Չ. Ֆ.), № 215։

¹⁰ Տե՛ս Հ. հաշատուրյան, Գրական տեղեկատու, Երևան, 1986։

¹¹ Հայրենիք, 1928, № 11, էջ 76։

խորանում Զարյանի բնածին ըմբոստությունն ու տխրությունը: Զարյանը փախչում է այս դպրոցից: Այս շրջանում, առաջին անգամ, սեր է խոստովանում տարիքով իրենից մեծ ուսու պարուհուն, երազում պատժել անարդար տեսուչներին, Հայաստանը ազատագրել տաճիկներից, ոգևորվում Գլադստոնի կոչով՝ «Եղբայրական օգնություն հայերեն»: Ձևավորվում է նաև կյանքի մասին առաջին եզրահանգումը՝ «Կյանքը լավ կազմակերպված չէ...»:

Այնուհետև Զարյանը տեղափոխվում է Փարիզի լիցեյ, ուր խոսում էին սեփականության, առևտրի, կղերականության, կուսակցությունների, քաղաքականության և շատ քիչ՝ բանաստեղծության մասին: Լիցեյի դասընկերները նրան պատմում են Բիսմարկի մասին, ինքն էլ նրանց՝ Համիդի կոտորածների. «Բռնունջներս սեղմվում էին և աչքերս լցվում զայրույթով»¹²: Հնտանկան մի հավաքի ժամանակ Զարյանը հանդիպում է Արշակ Չոպանյանին, որի հետ րարեկամական կապերը պիտի շարունակվեին մինչև կյանքի վերջը:

Լիցեյում կազմակերպված գրական խմբակում, որ «Հինգեր» անունն էր կրում, իր մի քանի համախոհների հետ ուսումնասիրում է Ս. Մալարմեի, Պ. Վեռլենի, Շ. Բոդլերի, Ա. Ռեմբոյի և այլոց գրական գործերը, բանավիճում ոճի, լեզվի, գրելու տեխնիկայի և այլ հարցերի շուրջ՝ միշտ նշանաբան ունենալով՝ գրականության մեջ պետք է ամեն ինչ փոխել: Գնալով ձևավորվում են Զարյանի խորհրդապաշտական հայացքները: Աշխարհի փոքրության ու միակերպության վերաբերյալ բողոքյան բնութագրումը շատերին էր մղում «խանդ ու սեր» որոնել անհունի, անտեսանելիի և անիմանալիի ոլորտներում՝ փորձելով ընդլայնել տիեզերքի նկատմամբ մարդկային ընկալումները:

1901-ին ավարտելով ֆրանսիական լիցեյը՝ Կ. Զարյանը վերադառնում է Կովկաս: Ատ. Կուրտիկյանը գրում է, որ Զարյանը ֆրանսիական միջնակարգ դպրոցն ավարտել է 1908-ին¹³: Դա սխալ է, քանի որ նման պարագայում այլևս ժամանակ չի մնում Բելգիայում սովորելու համար, որովհետև հայտնի է, որ 1910-ին գրողը արդեն Վենետիկում էր և հայերեն էր յուրացնում:

«Անցորդը և իր ճամփան» հուշագրությունում Զարյանը վկայում է, որ ինքը Բաքվի՝ 1904 թ. ազգամիջյան ընդհարումների ականատեսն է եղել: 1905-ին Զարյանը Թիֆլիսում է, որտեղից էլ «առանց միջոցների, մենակ ու աղքատ» մեկնել է Բրյուսել, որտեղ հաճախում է Ունիվերսիտետ լիբրերի դրականության և փրիսոփայության դասընթացները: Այստեղ էլ կատարում է դրական առաջին փորձերը: Թ. Թորանյանը, Զարյանին վկայակոչելով, գրում է, որ առաջին գործը՝ «Dauleur des larmes» («Արցունքների ցավը»), գրվել է ֆրանսերեն: Բ. Նուրիկյանին դրած մի նամակ ևս հաստատում է այս իրողությունը՝ «առաջին գրվածքներս (բանաստեղծություններ) գրած եմ ֆրանսերեն»¹⁴:

Զարյանը ապրում է բուռն կյանքով՝ ուսանողական անքուն գիշերներ, երկար վիճաբանություններ, Կաֆե Լանդուտում և Կաֆե Լիրիկում անցկացրած ոգևորության շրջան, ընկերային գաղափարներ, Պլեխանով, Լենին, էմպիրիկոլոիտիցիզմ, հեղափոխական գործունեություն: Ժնևում լույս տեսնող բուլղարիկյան «Ռադուդա» ամսաթերթում (1906 թ.) տպագրում է պրոլետարական բանաստեղծություններ՝ «Արևմտյան քաղաք» և այլն: Կ. Զարյանի հեղափոխական հակումները բացատրելի են ոչ միայն նրա աղատապաշտական նկարագրով, այլև այն հանգամանքով, որ նա լավ ծանոթ էր հայ ազատագրական շարժումներին, որ ծավալվում էին դարասկզբին թե՛ Արևմտահայաստանում և թե՛ Արևելահայաստանում: Կամոյի կողմից Լենինին ուղարկված դրամը փոխադրելիս Զարյանը ձերբակալվում է և տարի ու կես նստում Մյունխենի բանտում: Մյունխենի բանվորությունը մի շարք ցույցեր է կազ-

12 Սովետական գրականություն, 1970, № 6, էջ 102:

13 Տե՛ս Ս. Կուրտիկյան, Կոստան Զարյանի հետ (Արտասահմանի հայ գրողների հետ, Երևան, 1984):

14 ԳԱԹ, Բ. Նուրիկյանի ֆոնդ. № 314:

մակերպում ի նպաստ այն բանի, որ Զարյանն ու նրա հեղափոխական ընկերները չհանձնվեն ցարական իշխանություններին: Աղատվելով բանտից՝ Զարյանը վերադառնում է ժնե, մեկնում Փարիզ:

Զարյանը տեսնում է նաև, որ կուսակցությունները մեկը մյուսի դեմ դավում են: Փախստական ռուս հեղափոխականները օրերով վիճում են, քանի որ չգիտեն՝ ինչ անեն իրենց «անոթի ստամոքսների» հետ: Իսկ Ադանայում ծավալվում են նոր կոտորածներ. «Ա՜հ, 909-ին աշխարհը ման էր գալիս շորս ոտքի վրա»¹⁵: «Անցորդում», խոսելով իր հեղափոխական անցյալի մասին, Զարյանն այն միտքն է հայտնում, որ ինչպես շատերը, այնպես էլ ինքը, առաջ կարծել է, թե բոլշևիզմը կոչված էր վերջին հարվածը տալու նյութապաշտ աշխարհին, այնինչ պարզվեց, որ նա կոչված է «բռնության ուժով» շարունակելու աշխարհի այդ վիճակը:

1909—1910 թթ. ընթացքում Զարյանը արվեստի և գրականության վերաբերյալ դասախոսություններ է կարդում Բրյուսելում: Բելգիայում այդ տարիներին ծավալվել էր ֆլամանդական մշակույթի ու լեզվի գերակայության հարցը՝ որպես հակազդեցություն ֆրանսիականի: Խնդիրը բորբոքվում էր նաև այն հանգամանքով, որ թեև ժամանակի ամենահայտնի դեմքերից մեկը՝ է. Վերհարներ, գրում էր ֆրանսերեն, սակայն ծագումով ֆլամանդացի էր: Ֆլամանդական կյանքը՝ Զորդանույի, Ռուբենսի նկարներով, իր բանաստեղծներով ու սրճարաններով, անանց ազդեցություն է թողնում Զարյանի վրա: Հատկապես մեծ էր Վերհարների ազդեցությունը: Բելգիական բանաստեղծության «միակ կենդանի ձայնը» հետաքրքրվում է Զարյանի գրածներով, և նրանք հանդիպում են:

Զարյանը ամբողջովին նետվում է այն շարժման մեջ, որ նպատակ ուներ լեզվին կենդանություն տալու համար վերադառնալ հայրենի հողին՝ համոզված, որ լեզուն՝ ինչպես ծառը, իր հյուսիս կարող է ստանալ միայն հողից: Սա հայրենաբաղձության այն դրսևորումներից մեկն էր, որ ամենից առաջ արտահայտվել էր ֆրանսիական ու իտալական գավառական (պրովանս) գրականության մեջ: Իրավիճակը նույնն էր նաև արևմտահայ գրականության շրջանակներում: Զ. Մնձուրին, օրինակ, վկայում է, որ դարասկզբին հայ գրողը ևս «հոգիի դողացումներով», «քնարական ոգեկոչումներով» երգում էր հայրենի գյուղն ու հողը՝ հայ արվեստը իր բոլոր ճյուղերով, ընդ որս և գրականությունը¹⁶: Լեզվի և գրականության շուրջ ծավալված վեճերից մեկի ժամանակ, ինչպես վկայում է Կ. Զարյանը, է. Վերհարներ հարց է տալիս. «— Զգիտեմ, դուք հավատացյալ եք, թե ոչ. բայց եթե լինեիր, ի՞նչ լեզվով պիտի աղոթեիր:

— Մանուկ հասակիս մայրս ինձ սովորեցրել էր «Հայր մերը» գրաբար...

— Ուրեմն, ինչ է բանաստեղծությունը, եթե ոչ մշտապես աղոթք» (121):

Բելգիայի ընդհանուր լեզվական վիճակը և Վերհարների խոսքերը վճռում են Զարյանի լեզվի հարցը: Մեծ գրողի ազդեցությունը Կ. Զարյանի վրա նաև ստեղծագործական թեմայի առումով է նշանակալից: Բելգիան տասնամյակներ շարունակ հեծել էր տևտոնական լծի տակ, և Վերհարներ իր դժբախտ հայրենիքի երդն էր հնչեցրել, մի բան, որ մասամբ իրականացնելու էր նաև Զարյանը: Վերոհիշյալ խոսակցությունից կարճ ժամանակ անց Զարյանը արդեն նստած էր Ս. Ղազար վանքի սենյակներից մեկում՝ ընկնելով հայ լեզվի օվկիանոսի մեջ: Զարյանի կենսագրությանը անդրադարձած բոլոր ուսումնասիրողները որևէ երկրայություն չունեն այն հարցում, որ Զարյանը 1910-ին Բելգիայից մեկնել է Վենետիկ և սովորել հայոց լեզուն: Այնինչ՝ Զարյանը իրականում 1910-ի վերջերին Կ. Պոլիս է ժամանել և մի որոշ ժամանակ մնացել այնտեղ¹⁷: Զարյանը այստեղ տպագրել է մի քանի չափածո և արձակ

¹⁵ Հայրենիք, 1928, № 12, էջ 18.

¹⁶ Զ. Մնձուրի, Կապույտ լույս, Նրեան, 1968, էջ 129.

¹⁷ Տե՛ս Աղատամարտ, Կ. Պոլիս, 13. XII. 1910, էջ 368.

բանաստեղծություններ (թարգմանվել են ֆրանսերենից)։ Այդ օրերին ստացած մտերմիկ տպավորությունների տակ գրել է «Նամակ առ պարուհին» քերթվածքը և թղթակցել Կ. Պոլսի մամուլին։

Գիտե՞ր արդյոք Զարյանը հայերեն մինչև վենետիկ մեկնելը։ Սա մի հարց է, որին շատերն են բացասական պատասխան տվել։ Երբ Զարյանը ծնողներից բաժանվեց, հինգ տարեկան էր։ Բացառվում է, որ հայրենասեր ու հայասեր հայրը, շամտխեցի մայրը, որոնք տան պատերը զարդարել էին հայ գործիչների ու մտավորականների նկարներով, հայերեն չխոսեին ու չսովորեցնեին նաև փոքրիկ Կոստանին։ Եվս հինգ տարի Զարյանը գտնվել է Կովկասում։ Թեև սովորում է ռուսական գիմնազիայում, սակայն Բաքվի հայահունչ մթնոլորտից հեռու չէր կարող լինել։ (Զարյանի հայեցի նկարագրի վկայություններից մեկն էլ լիցեյում այլազգիներին Համիդի ջարդերի մասին պատմելու փաստն է)։

Զարյանին հանդիպած հայ առաջին մտավորականներից մեկը՝ Ա. Զոպանյանը, Զարյանի լեզվական իմացությունների մասին կարող էր ավելի ստույգ վկայություններ տալ, քան մեկ ուրիշը։ Ծիշտ է, Զարյանը գրում է, որ Զոպանյանը տխրել է, երբ իմացել է, որ ինքը հայերեն չգիտի, բայց այդ «չգիտենալը» ազատ գրելու և խոսելու կամ գրական հայերենի չիմացություն կարող էր լինել։ Զոպանյանը վկայում է, որ Փարիզում տեղի տվեց Կ. Զարյանի «Հայ և ռուս նախնական կրթությունը»¹⁸ (ընդգծումը—Ա. Ա.)։ Կարո՞ղ էր արդյոք հայեցի (թեկուզ ամենանախնական) այդ կրթությունը ամբողջովին մոռացված լինել։ Զոպանյանը մի փոքր հետո ավելի որոշ է գրում, որ Զարյանը պահպանել էր «իր մանկության բարբառը՝ կովկասյան հայերենը»¹⁹։

Սուրբ Ղազար կղզում Զարյանը, ըստ էության, ավելի շուտ կատարելագործել և խորացրել է իր իմացած հայերենը, քան նոր-նոր սովորել։ Այստեղ Զարյանի ուսուցիչներն էին Արսեն Ղազիկյանը (գրաբարի) և Նիկողայոս Աղունցը (աշխարհաբարի)։ Դասերը տեղի էին ունենում «բայրոնյան» սենյակում։ Հենց պատմաբան Աղունցն էլ Զարյանին խորհուրդ է տալիս բառերն ու քերականությունը ուսումնասիրել վանքում, իսկ լեզուն և ոճը նախ՝ Պոլսում, ապա ծննդավայրում, այդ ամենը կատարելագործելով կյանքի մնացած շրջանում։ Զարյանը սովորել է նաև իտալերեն, իսկ Իսպանիայում գտնվելու ընթացքում իսպաներենի դասեր է առել վանքերից մեկում։ 45 տարեկան հասակում սովորում է նաև անգլերեն և այդ լեզվով անգամ բանաստեղծություններ գրում։

Վենետիկում Զարյանը 1912-ին ամուսնանում է Թագուհի Շահնազարի հետ։ Տարեվերջին նրանք մեկնում են Կ. Պոլիս, ուր Զարյանը եկել էր գտնելու իր մայրենի լեզուն, ճանաչելու հայ ոգին։ Մխիթարյան միաբանության հայտնվելը միջավայր էլ ավելի էր սրել Զարյանի հայրենասիրական զգացումները։ Թեև շարունակում էր գրել ֆրանսերեն, սակայն արդեն այն համոզմանն էր (հետագայում ձևակերպված՝ «Հռոմեական հուշատետրում»), որ «Օտար լեզվով գրելը նշանակում է ուրիշների մտայնությանը հարմարվել, հոգով և մտքով ծովել... նմանություն անել»²⁰։ Նույն հարցի վերաբերյալ Զարյանը արտահայտվել է նաև «Երկրներ և աստվածներ» գործում, հայտնելով այն միտքը, որ օտար լեզվով արտագրողը կորցնում է իր անհատականությունը. «նա այնքան լիովին ինքը ինքը չէ, որ կարողանում է դառնալ ուրիշ»²¹։

Պոլսի մամուլում («Շանթ», «Ազատամարտ», «Ամենուն տարեցույցը» և այլն) Զարյանը տպագրում է մի շարք բանաստեղծություններ՝ բոլորն էլ

18 Անահիտ, Փարիզ, 1930, № 4, էջ 105։

19 Նույն տեղում, էջ 106։

20 Հայրենիք, 1948, № 11, էջ 12։

21 Նույն տեղում, 1936, № 9, էջ 36։

թարգմանված ֆրանսերենից: 1913—1914 տարեշրջանում ֆրանսիական գրականություն է դասավանդում Կ. Պոլսի դպրոցներում: 1914-ին Պոլսում Զարյանը հիմնում է «Մեհյան» հանդեսը: Հանդեսում տպագրած իր մի շարք հոդվածներում Զարյանը փորձում է պատռել հայ կյանքի արտաքին վարագույլը, դեմ կանգնել այն իրականությանը, կանգնել այնտեղ «ուր որևէ կշիռ են, ոչ ասել անարվեստ գրականությանը, կանգնել այնտեղ «ուր որևէ ուրիշը շանթահարված պիտի տապալվեն»²²: Հանդեսի դրսևորած որոշ անհանդուրժողական առաջադրություններում, որով ժխտվում էին նաև արժեքավոր գործերը, զգալի էր նաև Հ. Օշականի «Հարթենք»-ների միագծությունը: Հանդեսի առաջին համարը լույս տեսնելուց հետո Զարյանը, բառարանի օգնությամբ, գրում է հայերեն առաջին հոդվածը: «Մեհյանի» համարները շատ արագ վաճառվում են, բայց և տեղիք տալիս բուռն վեճերի: Մտքի և հոգու այդ տոնը ընդամենը վեց ամիս տևեց: Պատերազմը օրավուր մոտենում էր: Հայությունը նոր հույսերով էր ներշնչվում՝ ակնկալելով արդարության վերջնական հաղթանակը բիրտ ուժի դեմ: Հետագայում խոսելով այդ օրերի անհիմն ոգևորության մասին՝ Զարյանը վկայում է, թե ինչպես հայ քաղաքական գործիչներից շատերը իրենց բազուկները լայն բաց էին արել սահմանները ճշտելու համար, թե ինչպես «նոր կազմված ծրագրերի համաձայն» թուրքական րանակը պիտի պարտվեր և... իրեն ծովը նետեր: Սակայն Կ. Պոլսի փողոցներում լսվում են շարաշուք ձայներ: Շուտով քաղաքում ջարդեր են կազմակերպվում:

1914 թ. հոկտեմբերին Զարյանը կնոջ և երկու երեխաների հետ կարողանում է հրաշքով անցնել սահմանը. «Սիրտս սեղմվել է: Ահա ես մեկնեցի, իսկ նրանք, բոլոր այնտեղ մնացածները...»²³:

Շուրջ վեց ամիս Զարյանը մնում է Սոֆիայում, որտեղ հանդիպում է Պոլսից վերադարձող Յո. Լեփսիուսի հետ: Զարյանը այցելում է նաև Բելգրադ: Խոսելով բուլղարահայ գաղութի մասին, Զարյանը վկայում է, որ այն մոխիրներով ծածկված կրակի վրայով է քայլում, մշակում անհնարին ծրագրեր ու Անդրանիկին թուր նվիրում: Կրկնվում են պատմության փիլիսոփայությունն ու դեպքերի տրամաբանությունը: Եվրոպան նույն հանդարտությամբ նայում է բալկանյան ժողովուրդների զոհողություններին և նույն մարդասիրական ճառերը ասում: «Քաղաքներ» շարքի «Ռումբ և դիմակ» գործում Զարյանը աշխարհի ապրած այդ օրերը խիստ համառոտ է բնութագրում՝ «Գարուն, արյուն, արև և վիշտ: 1915»²⁴:

Զարյանների բնտանիքը մեկնում է Իտալիա, ուր բնակվում է նեապոլից ոչ հեռու գտնվող Պոզիտանո գյուղում: Այստեղից Զարյանը գնում է Կապրի, այնուհետև տեղափոխվում է Հռոմ և բնակվում այն պանսիոնում, ուր մի ժամանակ ապրել էր Հ. Իբսենը՝ այդպես էլ չգտնելով պերզյունտյան հարցումի պատասխանը՝ ի՞նչ հարկ կար գալ օտար այս վայրերը:

1916-ին Զարյանը Ֆլորենցիայում է: Պոլսից դալիս են նոր ջարդերի լուրեր: Ո՞ւմ ասել, որի դուռը զարկել: Զարյանը բախում է Պապի՝ Բենեդիկտ XII-ի դուռը: Բայց՝ ապարդյուն: Այս շրջանում Զարյանը ծավալում է ազգանվեր բուռն գործունեություն, գրում նոր գործեր, տպագրում մի շարք հոդվածներ ու բանաստեղծություններ: Կատավիճակում լույս տեսնող «L' Eroico» (Հերոսական) հանդեսում «All Armenia» (Հայաստանին) վերնագրի տակ, որը ամփոփում էր 1916 թ. 8—10 միացյալ համարները, օտար հեղինակների հոդվածներից դաս, տպագրվում են նարեկացու և Շնորհալու տաղերը, հայ կրոնի և գեղարվեստի բնագավառին վերաբերող այլևայլ նյութեր, ինչպես՝ նաև Զարյանի «Ծրեք երգեր ասելու համար վիշտը երկրի և վիշտը երկնքի» խորհրդապաշտական թատերապոեմի առաջին երկու մասերը, որը ճանա-

²² Նույն տեղում, 1928, Մ 1, էջ 29:

²³ Նույն տեղում, էջ 22:

²⁴ Նույն տեղում, Մ 9, էջ 22:

չում է բերում Զարյանին (պոեմը իտալերեն էր թարգմանել գրող Ալեք Ռոզոն), նույն թվականին Լա Սպեցիալում պոեմը լույս է տեսնում առանձին գրքով և ունենում երեք հրատարակություն, որոնցից մեկն էլ՝ «Լանչանո Փարապա» հրատարակության համաշխարհային մատենաշարն էր: Հայտնի երաժշտահան Օ. Ռեսպիգի 1921-ին «Գարուն» վերնագրով օրատորիա է գրել պոեմի թեմաներով: Զարյանի բանաստեղծությունների հիման վրա նա գրել է երաժշտական նաև այլ գործեր: Ադա Նեգրին և լեհ գրող, փիլիսոփա Լուտոսլավսկին դրվատում են պոեմը: Նկարիչ և գրականագետ Դովլինտը պոեմը ֆրանսերեն է թարգմանում և նկարազարդում: Վիեննայում հրատարակվում են պոեմի իտալերեն, գերմաներեն և անգլերեն թարգմանությունները: Թիֆլիսից Կ. Զարյանին գրած՝ Գ. Լեոնյանի նամակից (42) երևում է, որ «Գեղարվեստի» խմբագիրը պատրաստակամություն է հայտնել «Երեք երգերի» բնագիրը տպագրել իր հանդեսում: Թ. Թորանյանը սխալվել է, երբ գրել է, թե իտալիայում է գրվել այդ պոեմը և այն էլ ֆրանսերենով «որ անմիջապես թարգմանվեցավ իտալերենի, ապա հայերենի»²⁵: Իրականում պոեմը գրվել է հայերեն: 1916-ին Գ. Լեոնյանին դրած նամակում Կ. Զարյանը վկայում է, որ իր համար «ավելի ուրախալի պիտի լիներ ճայերեն քննադատը հրատարակված տեսնել»²⁶ (ընդգծումը—Ա. Ա.), բան օտար լեզուներով թարգմանությունները: Զարյանը դրում է, որ այդ գործը լույս պիտի տեսներ «Մեհայանի» մեջ, սակայն սկսված պատերազմը ամեն բան տակն ու վրա է արել:

Հայերեն գրելը և հայության միջավայրում գործելը Զարյանի իղձն է մնում և այս շրջանում: Գ. Լեոնյանին գրած 23. 9. 1916 թվակիր նամակում Զարյանը հույսեր է փայփայում հայության բուն միջավայր վերադառնալու²⁷: նույն նամակում Զարյանը հայտնում է նաև, որ ինքը զբաղված է բանաստեղծությունների հատորի և հայկական պատմական առասպելների թեմաներից վերցրած մի պոեմի պատրաստությամբ:

Կապված ապրուստի խնդիրների, ստեղծագործական աշխատանքների, ազգային գործունեության հետ, ինչպես նաև ճնշված ժողովուրդների ազատագրության ընկերությանը անդամակցության պատճառով Զարյանը հաճախակի է քաղաքից քաղաք տեղափոխվում: 1916—1917 թթ. Միլանում է, ապա՝ Ֆլորենցիայում: Հրաշակերտների այդ քաղաքը հարստացնում է Զարյանի արվեստագետ հոգին և գրողին մղում ստեղծագործական ու ազգային ժրագրերի իրականացման ավելի արդյունավետ գործունեության: Ֆլորենցիայի քաղաքագետ Պատչիի հովանավորությամբ Զարյանը հիմնադրում է «Կրո Արմենիա» շարժումը, կարդում մի շարք դասախոսություններ, քաղաքի մեծ սրահներից մեկում (Չինկվիչենտա) իտալերեն լեզվով մեկուկես ժամ բանախոսում հայկական հարցի վերաբերյալ, քաղաքական մի քանի կուսակցությունների և քաղաքի իշխանությունների մասնակցությամբ կազմակերպում է հայնպաստ ցույց և դաշնակից տերություններին առաջադրում ճանաչել Հայաստանի անկախությունը և հայերին՝ որպես զինակից ազգ. այդ բանախոսությունը 1918-ին թարգմանել և տպագրել է Փարիզի «Les Nations Latines» (Լատինական ազգեր) ամսագիրը, որի որոշ հատվածներ նույն թվականին հայերեն տպագրել է Փարիզի «Վերածնունդը» (№ 11):

Զարյանի ընտանիքը կարճ ժամանակով բնակվում է հայտնի դերասանուհի էլեոնորա Դուգեի բնակարանում, որի հետ գրողը ծանոթացել էր դեռևս Վենետիկում, վայելել արգելված և վտանգավոր սիրո հաճույքը, ունեցել արբեցումի օրեր²⁸: Զարյանի համբավը այնքան մեծ էր, որ քաղաքի իշխանությունները ցկյանս նրա տրամադրության տակ են դնում 64 սենյակներից բաղկացած Բեռլինյան առանձնատունը: Նկատենք, որ Զարյանի կյանքին

²⁵ Նաիրի, Բելյուժ, 1970, № 39, էջ 5:

²⁶ ԳԱԹ, Գ. Լեոնյանի ֆոնդ, № 1377:

²⁷ Նույն տեղում, № 1378:

²⁸ Հայրենիք, 1928, № 2, էջ 33:

շատ բնորոշ են հակասական իրավիճակները: Մի կողմից հուսահատություն ու ազգային վշտի անանց մորմոքումներ, մյուս կողմից՝ ստեղծագործական վերելք ու համընդհանուր ճանաչում, ապրուստի ու հացի հետևից ամենօրյա վազք և շքեղ պալատներ ու բարձրակարգ ընդունելություններ: Զարյանն այդպես է անցկացրել իր ողջ կյանքը. շնայած նյութական անձկությանը, գրեթե միշտ ապրել է իսկական բանաստեղծին հատուկ շքեղությամբ ու անհոգության: 1917-ին ծնվում է գրողի դուստրը՝ Նվարդ Զարյանը (հետագայում՝ անվանի քանդակագործուհի, որը ստեղծել է նաև Զարյանի մի քանի կիսանդրին):

Ա. Զոպանյանին գրած նամակների ամսաթվերից երևում է, որ Զարյանը Ֆլորենցիայում է մնացել մինչև 1919-ի հուլիսը²⁹:

Զարյանը՝ որպես իտալիայում լույս տեսնող «Secolo»—«Դար» (Միլան), «Le nuovo giornale»—«Նոր լրագիր» (Ֆլորենցիա), «Le messaggiero»—«Լրագիր» (Հռոմ) թերթերի հատուկ թղթակից, 1919 թ. աշնանը (Պոլսի ճանապարհով) մեկնում է Մերձավոր արևելք և Կովկաս՝ ավելի քան երկու ամիս մնում է Վրաստանում, մեկ ամիս՝ Հայաստանում, ուր հանդիպում է նաև Վ. Թեքեյանին: Նրանք այցելում են Ամենայն Հայոց Կթողիկոս Գևորգ V-ին: 1920-ի սկզբներին Զարյանը վերադառնում է Ֆլորենցիա՝ Կ. Պոլսում հանդիպում ունենալով Ալ. Շիրվանզադեի հետ: Իտալիայում Զարյանը լույս է ընծայում իր ճամփորդական տպավորությունները, որի թարգմանությունը պատրաստվում էր տպագրելու Կ. Պոլսի Սանճաճյան տպարանը՝ «Իտալական»-ին հար և նման տպագրական ճաշակով մը³⁰: Սա նշանակում է, որ Զարյանի տպավորությունները լույս են տեսել առանձին գրքով, քանի որ թերթերում կամ ամսագրերում հրատարակված լինելու դեպքում չէր կարող «հար և նման տպագրական ճաշակի» մասին խոսք լինել:

Մի կարճ ժամանակ իտալիայում մնալուց հետո, լքելով իր բարեկեցիկ կենցաղը, Զարյանը 1920 թ. սեպտեմբերին ընտանիքով տեղափոխվում է Կ. Պոլիս³¹, Խոսելով այդ օրերի պոստհայ կյանքի քաղաքական ու բարոյական մթնոլորտի մասին՝ Զարյանը վկայում է, որ ամենուրեք տիրում էր զարհուրելի հուսահատություն ու սարսափ: Եղեռնը փոխել էր ժողովրդի հոգեվիճակը՝ հայությանը զցելով «հոգեկան մեռելության» մեջ:

Կ. Պոլսում, ինչպես գրում է «Անցողիկում», Զարյանը, դպրոցից դպրոց «մի քիչ գիտություն ծախելով», հոգացել է իր հացի խնդիրը՝ «Սարսափելի բան է փոքր ազգի գրող լինելը, այն էլ հայ ազգի»³²: Զարյանը դասավանդում է Կեդրոնականում (ուր նրա աշակերտներից է եղել Լևոն-Զավեն Սյուրմելյանը) էսայան և Հինդլյան ուսումնական հաստատություններում: Հատկապես ակտիվ գործունեություն է ծավալում, իր խոսքերով ասած, «ազգ ստեղծելու» համար, ուր մեծ տեղ էր հատկացվում բարոյագետներին և բանաստեղծներին: Այն գրական, ազգային ու մշակութային շարժումը, որ Զոպանյանի խորհրդով ծրագրում էր կատարել Փարիզում, Զարյանը փորձում է իրականացնել այստեղ: «Մինչև որ բարոյապես չկազմակերպվենք, երբեք ազգ չպիտի լինենք, և այդ բարոյական միությունը միայն արվեստը և գրականությունը կարող է առաջ բերել»³³:

1921-ի վերջերին և 1922-ի սկզբներին Կ. Պոլսում հիմնվում է «Հայ արվեստի տունը». մտահղացման հեղինակը Հովհ. Թումանյանն էր, որ 1921-ի հոկտեմբերից, որպես Հայաստանի օգնության կոմիտեի պատվիրակ, դառնում էր Կ. Պոլսում: Միության աշխատանքներին ակտիվ մասնակցություն է

29 ԳԱԹ, ԶՅ, 2130:

30 Ոստան, Կ. Պոլիս, 1920, № 10, էջ 40:

31 Տե՛ս Կ. Զարյան, Դեպի Արարատ, Ոստան, 1920, № 14:

32 Հայրենիք, 1926, № 12, էջ 18:

33 ԳԱԹ, ԶՅ, 2131:

բերում նաև Կ. Ջարյանը⁸⁴, 1922 թ. Ջարյանը Կ. Պոլսում հիմնում է «Բարձրավանք» հանդեսը, որը թե՛ գաղափարական և թե՛ ստեղծագործական առաջադրանքներով «Մեհյանի» յուրովի շարունակությունն էր։ Բացի Ջարյանից, հանդեսի հրատարակչական կազմում էին Գ. Գավաֆյանը, Վ. Թեքեյանը, Շ. Պերպերյանը և Հ. Օշականը։

Այս շրջանում Ջարյանը գրում է մի շարք հոդվածներ ու բանաստեղծություններ, այդ թվում՝ Դուրյանի մահվան տարեկիցի կապակցությամբ «Ասացված մեռած բանաստեղծի համար» քերթվածը։ 1922-ին Կ. Պոլսում լույս է տեսնում Ջարյանի բանաստեղծությունների առաջին հայերեն ժողովածուն՝ «Օրերի պսակը» վերնագրով, որի մի շարք քերթվածներ արդեն տպագրվել էին Ա. Զոպանյանի հրատարակած «Վերածնունդում»։ Ջարյանը հստակորեն սկսում է տեսնել, որ շահախնդիր Եվրոպայի և դավադիր Ասիայի գնալով մեկ միասնություն են կազմում։ Անատոլիայում վաղուց սկսվել էր թուրքական նոր շուրժում։ Կ. Պոլսում մնալը վտանգավոր է դառնում։ 1922 թ. հոկտեմբերին՝ քմալականների մուտքից (նոյեմբեր) մի փոքր առաջ, գրողը թողնում է Կ. Պոլիսը և կնոջ ու երեք երեխաների հետ մեկնում Խորհրդային Հայաստան։ Նրա հոգին լցված էր բնօրրանի և մայր հողի անընդունելի⁸⁵։ Սակայն նա լավ էր հասկանում, որ Հայաստանում հեշտ չի լինելու «Երկիր դրախտավայր» Ջարյանին հաճախ պատկերանում է անկայուն նավի տեսքով՝ ծովի և լեռան հակադիր պայթյունով ապրող մի իրականություն, ուր իրար են խառնված երազն ու գորշ իրականությունը։

«Եթե լավ է, գրիր, եթե չեն սպանում, չեն բանտարկում, գրիր, մենք էլ կգանք», — ասում են նրան ուղեկցողները⁸⁶, Ջարյանը՝ ինքը, ոմանց համոզել է մեկնել Հայաստան։ Դրա վկայություններից մեկն էլ Հովսեփ Գուլումճյանի՝ Մարտիից 1925 թ. գրած նամակի (23) բովանդակությունն է, ուր վերջինս ափսոսանք է հայտնում, որ չի հետևել Ջարյանի հետ Հայաստան մեկնելու նրա խորհրդին։ Ասենք, որ սփյուռքահայությունը հայրենիքի հետ կապելը (նաև հայրենադարձության ճանապարհով) մշտապես եղել է գրողի ուղարկության կենտրոնում։ 1946-ի հայրենադարձության շրջանում Ջարյանը, որ գտնվում էր Ամերիկայում, Բեյրութի «Անի» ամսագրում⁸⁷ տպագրեց «Զի, գարուն, Հայաստան» անտիպ շարքից մի հատված, որը, ըստ գրողի կից նամակի, նույնպես պիտի նպաստեր հայրենադարձության շարժմանը։

1922-ին Ջարյանը գնում էր կյանքի նոր բովանդակություն որոնելու հայրենիքում։ Նրա համար ամեն ինչ նոր էր լինելու՝ մթնոլորտը, օրենքները, կարգերը... Արդեն նավի վրա Ջարյանին նայում են ներողամտորեն՝ բանաստեղծ մարդ է, «ավելորդ բեռ», «բայց, վերջապես, պրոպագանդայի տեսակետից» կարևոր։ Բաթումի նավահանգստում Ջակչեկայի մանրակրկիտ ստուգումները զառնությամբ են լցնում գրողի հոգին, իսկ տարված հավատաքնությունը՝ վախ պատճառում նաև ընտանիքի անդամներին։ Թիֆլիսում գրողի բարեկամները խորհուրդ են տալիս այդ խառը ժամանակներում Երևան չմեկնել, սակայն Ջարյանի «առաջատուները դեռ լի էին քամիներով»։ Ա. Զոպանյանին ուղղված իր նամակներից մեկում Ջարյանը գրում է, որ Թիֆլիսում ուղղակի զարմացած էին, որ ինքը ուղում է բնակվել Երևանում. «Հայրենասիրություն, այո՛, բայց գնալ ընկնել այն ծակը»⁸⁸։

Երևանում Ջարյանը տեսնում է ճակատագրի տակ կուչ եկած մի ժողովուրդ։ Մնվում են նաև լավատեսական տրամադրություններ՝ «դեռ ինչքան հայեր կան»։ 1922-ի հոկտեմբերից Ջարյանը աշխատանքի է անցնում ժողո-

⁸⁴ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Ավագյան, Վերածնունդն և մի փորձ (Երիտասարդ գիտաշխատող, 1974, № 19, էջ 119—128)։

⁸⁵ Հայրենիք, 1926, № 12, էջ 42։

⁸⁶ Նույն տեղում, № 2, էջ 47։

⁸⁷ Տե՛ս Անի, 1946, № 2։

⁸⁸ ԳԱԹ, ԶՖ, 2158։

վրդական համալսարանում և դասավանդում եվրոպական դրականությունների բաղադրական ընդհանուր պատմություն առարկան, միևնույն ժամանակ բանֆակի գիտական խորհրդի քարտուղարն էր, դասավանդում էր նաև այլ հաստատություններում: Կինը՝ Թագուհին, դասավանդում է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտանոցում:

Զարյանների ընտանիքը ապրում է ծայրահեղ սուղ պայմաններում: Այս շրջանը նաև ստեղծագործական առումով նվազ արդյունավետ է եղել Զարյանի համար՝ ձանձրալի կյանք, միապաղաղ աշխատանք, մի քանի հոգվածներ, իտալական հեռագրերի թարգմանություններ, մի քանի փոքրիկ գործերի տպագրություն և ժողովներ, ժողովներ... Ամենուրեք կատարվում էին «գտումներ»: Քննում էին լուսաշխում, գեղաշխում, համալսարանում, դպրոցներում... Մարդիկ մի տեսակ բաժանվել էին դատավորների և մեղավորների: «Մեծ գաղափարները» իրականության մերկության: առջև խամբել էին: Տիրապետող մտայնությունը նենգությունն էր, նախանձը, սուտը, դաժանությունը: Իսկ դատողները «մի մի համիդներ էին»: Զարյանին, որպես արտասահմանից եկած մտավորականի, թույլ չեն տալիս Երևանից դուրս գալ: Այսպես, իր իսկ հարազատ երկրում Զարյանը դժբախտ էր ու աքսորյալ: Իր ապրած այդ դժվար օրերի մասին Զարյանը սրտի խոր ցավով է գրել³⁹:

Որպես խոհանոցի և միջանցքի բաժանիչ վարագույր կախված եռագույն դրոշը (որի գույների հաջորդականությունը Զարյանը փոխել էր և նմանեցրել հոլանդականին), որը մնացել էր Նիցցայի ազգային երեկույթից, ճակատագրական վերջակետ է դնում Զարյանին ցուցաբերվող անբարյացակամ վերաբերմունքին: Զարյանին պարզ է դառնում, որ շուրջը լուրջ ցաված է թշնամանքով⁴⁰, Տանը կատարվում է խուզարկություն: Հոկտեմբերին նրան «մի լավ հուպ են տալիս»: Գիմնազիայում աշակերտները կազմակերպված ձևով ապստամբում են նրա դեմ: Արդեն 1924-ի հունվարին ծանոթները խորհուրդ են տալիս հեռանալ երկրից: Նրանց տնից տանում են բանվորագույնացիական իշխանության ունեցվածք՝ երկու երկաթե մահճակալները և դաշնամուրը: Նույն թվականի մարտին համալսարանի կոմբիլդի աղջիկները «գործ» են սկսում Զարյանի դեմ՝ դասախոսությունները մարքսիստական չեն, ֆրանսերենը կատարյալ չէ: Նաև այլ զրպարտանքներ: Զարյանի գործերը հանձնվում են դատարան: Նույն օրերին «Մարտակոչը» դիմում էր գաղթահալությանը՝ Հայաստանի ոսկեդարի փառաբանումով և հայտարարում, որ Կ. Զարյանը այդ ամենի ակտիվ մասնակիցն է: Միջնորդությունների շնորհիվ 1924 թ. մարտին տեղի ունեցած դատավարությունից հետո դատարանը գործը կարճում է:

Հայաստանից հեռանալու պատճառներից մեկն էլ կանխատեսելի քաղաքական բռնություններից խուսափելու ձգտումն էր: Դժվար չէ ենթադրել, որ եթե Զարյանը մնար Հայաստանում կամ պետք է ենթարկվեր կուսակցական մտքի կարգապահությանը և դառնար մի քանի թույլատրելի լարերի վրա նվաղող հեղինակ, կամ էլ, որը շատ ավելի հավանական է, պիտի կիսեր ժամանակակիցներից շատերի ճակատագիրը՝ ենթարկվելով բանտի տանջանքներին կամ մահվան: Բոլոր դեպքերում, մենք այսօր չէինք ունենա հայ կյանքի այն անփոխարինելի վկայությունները, ազգային կողմնորոշիչ այն դաղափարները, որ փոխանցում է գրողը ներկա ու գալիք սերունդներին, նաև նրա թողած գեղարվեստական արժեքները:

Զարյանի մեկնումը խորհրդային Հայաստանից մի շարք գրականագետներ (Մ. Թեոդոսյան, Կ. Սասունի, Հր. Գրիգորյան, Գ. Սևան, Ա. Սանճյան և այլք), նշել են 1925 թ., որը սխալ է: Յու. Խաչատրյանը «Նորքում» (1994, № 2) տպված իր հոգվածում այդ թիվը ավելի է հետ տանում՝ 1925—1926: «Անցորդը և իր ճամփան» հուշագրությունում Զարյանը գրում է, որ Հայաստանից հեռացել է գարնանը, «եթե ծաղիկ էին նշնինները», սակայն չի նշ-

³⁹ Հայրենիք, 1928, № 3, էջ 51:

⁴⁰ Նույն տեղում, № 4, էջ 33:

շում 1924-ի՝ թև՝ 1925-ի գարնանը, Գ. Լևոնյանը շատ որոշակի է նշում ոչ միայն թվականը՝ 1924, այլև ամիսը՝ հունիսին⁴¹։ Տարրեր տեղեր տարբեր թվեր է նշել նաև Կ. Զարյանը։ 1924-ի կեսերին արդեն հայտնի էր, որ Զարյանը պետք է մեկնի արտասահման՝ այդ մասին գրում էին անգամ Կ. Պոլսի թերթերը։ Զարյանի մեկնումը Հայաստանից 1925 թ. հետ կապելը տեղիք է տվել նաև թյուրիմացություն։ Այսպես, Վ. Գաբրիելյանը գրում է, որ Զարյանը «Սրտի ճանապարհով» գրել է 1925 թ.⁴²։ Արտասահմանում գտնվող գրողը իր հոգևորականությունը և քաղաքական գիրքորոշմամբ չէր կարող նման լավատեսական շարք (կամ սյուն) գրել։ Այդպիսի բովանդակությամբ գործ կարող էր գրվել միայն 1922—1923 թթ. ընթացքում, երբ դեռ չէին սկսվել հալածանքները։

Երևանից Զարյանը հեռացել է ընտանիքով։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ նրա մեկնումը վերջնական էր, և այդ մասին գիտեին իշխանությունները, թեև պաշտոնական ձևակերպումը այլ էր։ Զարյանը արտասահման էր մեկնում համալսարանի, լուսժողովատի և ՀՕԿ-ի հանձնարարականներով։ Որ Կ. Զարյանը 1924-ին արտասահմանում էր, իրենց նամակներում վկայում են նաև Օ. Ավետիսյանը (9) Զարյանի՝ Պոլսի աշակերտներից և Ստեփան Զորյանը (31)։ Ի դեպ, կա նաև 1924 թ. սեպտեմբերին Վենետիկից Չոպանյանին գրած Զարյանի մի նամակը⁴³։

Ինչպես գնահատել Զարյանի հեռանալը՝ վերադարձի թե մեկնումի իրողությունը։ Ամեն դեպքում նա փորձում էր իր ներքին հոգեկան աշխարհը փրկել։ Բայց և (իր կյանքի օրինակով հաստատում էր ուրիշների իրավունքը) պաշտպանելով իր անկախությունը՝ պաշտպանում է բոլոր նրանց, ովքեր ուղում էին այդ անել, սակայն չէին կարողանում։ «Երբ ես մեկնում էի Հայաստանից,—գրում է Զարյանը Ա. Չոպանյանին 1931 թ.,—Թոթովենցը եկավ մոտս և ասաց. «Սիրելի Զարյան, գիտեմ, որ չպիտի վերադառնաս և պիտի գրես այն, ինչ որ մենք ամենքս մտածում ենք։ Երբ վաղը մեզ ստիպեն քեզ դեմ գրել, կենքս, գիտես դրությունը...»։ Եվ այդ՝ բոլորի անունից»⁴⁴։ Զարյանի դժգոհությունը ոչ միայն երկրում տիրող բռնարարքների հետևանք էր, այլև մշակութային ու գրական կյանքի սահմանափակումների, որոնց հեղինակներից մեկն էլ Ա. Կարինյանն էր։ Չնայած Զարյանի հոգեկան զրկանքները տեղեկներին չէին կյանքի վերջին օրերը, սակայն նա երբեք չի զգացել իր կապերը մայր երկրի հետ⁴⁵։ Հայաստանից հեռանալը Զարյանի համար ուներ նաև հոգեբանական այլ բացատրություն. մարդ-արարածը միշտ էլ առավել սիրում է իր երազը, ըստ այդ երազի, նա ստեղծում է իր պատրանք-աշխարհը, այնինչ, իրականությունը շատ հաճախ կոտորում է նրա թևերը, դեմ հանդիման կանգնեցնում անհաղթահարելի պատենշների ու փոքրոգի մարդկանց։ Հայաստանում Զարյանը քիչ գրեց, սակայն ապրեց «հայ ժողովրդական միջավայրի տեսիլներով ու շունչով»⁴⁶։

Զարյանների ընտանիքը ժամանում է Վենետիկ։ Որդիները մտնում են Մուրադ-Ռաֆայելյան վարժարան։ Արտասահմանում ամեն ինչ պետք է նորից սկսեր։ 1924 թ. դեկտեմբերի սկզբին Զարյանը, կինը և աղջիկը՝ Զվարթը, արդեն Փարիզում էին⁴⁷։ 1925 թ. հունվարի 3-ին Զարյանը Փարիզում ողջունի իսկույն է ասում Ա. Չոպանյանի գրական-հասարակական գործունեության 35-ամյակին նվիրված հոբելյանական հանդեսում⁴⁸։

41 Տե՛ս ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, № 2623։

42 Տե՛ս Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Երևան, 1987, էջ 353։

43 Տե՛ս ԳԱԹ, ԶՖ, № 2132։

44 Նույն տեղում, 2158։

45 Հայրենիք, 1928, № 3, էջ 38։

46 Անահիտ, 1930, № 4, էջ 108։

47 Տե՛ս Վ. Թեքեյան, Նամականի, Լոս-Անջելես, 1983, էջ 276։

48 Տե՛ս Ա. Չոպանյան, Նամականի, Երևան, 1980, էջ 9։

Զարյանը գրավոր և բանավոր սկսում է քննադատել խորհրդային իշխանություններին: Կարճ ժամանակ անց նրա նյութական և հոգեկան վիճակը շատ է բարդանում: Ընտանիքը պահելու հոգսին ավելանում է սփյուռքի կուսակցությունների դիրքորոշումը, որոնք հայությանը կոչ էին անում չճանաչող Զարյանի անկեղծությանը: Ընտանիքի հոգսը ծանրանում է կնոջ վրա, որը կար էր անում՝ օրվա հացը վաստակելու համար: 1925-ի վերջերին Փարիզում Զարյանը հիմնում է «La Tour de Babelle» («Բաբելոնի աշտարակը») ֆրանսերեն հանդեսը, որին աշխատակցում են Պիկասոն, Մ. Ունամունոն և այլ հայտնի անձինք: Ռաբ. Թագորը ողջունում է Զարյանի այս ձեռնարկը: Զարյանը բարեկամական կապեր է հաստատում Դրայզերի, Լորկայի, Ապոլիների և նշանավոր այլ մարդկանց հետ: Հանդեսում կոչ ուղղվեց բոլոր բանաստեղծներին՝ միասնաբար գրելու «Համադյուցազներգություն» գործը, որի մի մասը նույն թվականին գրեց ինքը՝ Զարյանը: Սակայն այդ կոչը մնաց անարձագանք: Ընդամենը երկու համար լույս տեսնելուց հետո, նյութական պատճառներով, հանդեսը դադարում է հրատարակվել: 1925 թ. մարտից Զարյանը դառնում է Փարիզում կազմակերպվող «Հայ արվեստի մշակների միություն» անդամ, որի նպատակն էր միավորել արտասահմանի հայ գրողներին ու մտավորականներին: Կահիրեում գտնվող Վ. Թեքելյանին գրած նամակից երևում է, որ Զարյանը ցանկություն է ունեցել գնալ Կիպրոս՝ հայկական որբանոցում պաշտոնավարելու: Սակայն, ուսումնական տարին սկսված լինելու պատճառով, նա Փարիզից մեկնում է Հոլանդիա՝ դասախոսություններ կարդալու և հայ մշակույթը պրոպագանդելու: 1926-ից Բոստոնի «Հայրենիք» ամսագրում սկսում է տպագրվել «Անցորդը և իր ճամփան» հուշագրությունը: Հետևում է թափառումների մի երկար ու ձիգ շրջան: 1927-ին Զարյանը մեկնում է Ամերիկա: 1928-ի տափեվերջին դարձյալ վերադառնում է, 1929-ին տեղափոխվում է Տրանսիլվանիա: Տարեվերջին գնում է Փարիզ և մինչև 1930-ի հունվարը այնտեղ մնալուց հետո նորից է վերադառնում Վենետիկ: Այդ օրերին Ա. Զոպանյանին գրած նամակում Զարյանը տեղեկացնում է, որ ինքը Փարիզից մեկնում է՝ առանց իմանալու, թե ուր պիտի խաբխախեն: 1931—1932-ին Զարյանը ապրում է Վիեննայում և Միլանում: 1931-ից 1934-ը «Հայրենիքում» սկսում է տպագրել «Բանկոտպը և մամուլի ոսկորները» վեպը:

Արտասահմանում Զարյանի գրիչը շատ ավելի բեղուն էր: Այդուհանդերձ, խանգարիչ հանգամանքները քիչ չէին: «Հուսաբեր» թերթի խմբագիր Վ. Նավասարդյանին 1931 թ. գրած նամակում Զարյանը բողոքում է մանավանդ ժամանակի սղությունից, որի մեծ մասը ստիպված է նվիրել «զանազան օտար թերթերին և շատ քիչ ժամանակը՝ հայ գրականությանը» (1): Ի դեպ, նա զանազան ծածկանուններով տպագրվել է ֆրանսիական, բելգիական, իտալական, անգլիական, իսպանական, հոլանդական հանդեսներում ու թերթերում: Առհասարակ Զարյանի օրերը հանդարտ չեն անցել: Նրան ամբողջ կյանքի ընթացքում քննադատել են «Մեր» ու «Զեր» դեմ գրելու համար՝ «Մեհանի» շրջանում՝ գրչակիցները, 1920-ական թթ.՝ բուլղերիկները, երիտասարդ գրողները՝ իրենց «բաց նամակներով», «Գրական դիրքերում»-ի խմբագրությունը, 1930-ական թթ.՝ «Մենք»-ականները, Շ. Միսաքյանի «Յառաջ»-ականները, հայ մտքի մեծերը՝ Մահարին, Զարենցը, նաև ապաշինորհները՝ իրենց տափակ պամֆլետներով, որոնք հաճախ ունեին մեկ նպատակ՝ վիրավորել գրողի անձը:

1934-ին Զարյանը մեկնում է Ամերիկա: Նույն թվականի մարտի 3-ին Համաստեղին ուղղված նամակում Զարյանը գրում է, որ իր գալը պայմանավորված չէ երկիրը տեսնելու ցանկությամբ, այլ եկել է «Իբրև խեղճ հայ գրագետ, որ պետք ունի հազար դուռ զարնելու՝ իր և ընտանիքի ապրուստը ճարելու համար»⁴⁰, 1934—1935-ին Զարյանը այցելում է Իսպանիա, ուր նյու-

40 ԳԱԹ, Համաստեղի ֆոնդ, № 103:

Որն է հավաքում Կիլիկիայի թագավոր Լևոն VI-ի վերաբերյալ, որի կյանքի մի հատվածը առնչվում էր Իսպանիայի պատմությանը, 1935—1938-ին Զարյանի Կորֆու կղզում է, որտեղ և գրում է Կոմիտասին նվիրված իր բանաստեղծությունը, Բոստոնի «Հայրենիքում» սկսվում է տպագրվել նրա «Երկրներ և աստվածներ» շարքը (1935—1938 թթ.), Մեկնում է Աթենք՝ «Երկրներ և աստվածներ» շարքի երրորդ մասի՝ Հունաստանին նվիրվելիք տպավորությունները թարմացնելու համար, Այստեղ հիվանդանում է, որը անդրադառնում է նրա տեսողության վրա, Հունաստանում բարեկամանում է Լորենս Դարրելի հետ, որին Զարյանը համարում էր իր գրական ուսուցիչներից մեկը և որի «Զարյանապատում» գրքի շուրջ հերոսներից մեկը Զարյանն է (Լ. Դարրելի մասին Զարյանը խոսում է իր «Կղզին և մի մարդ» գործում («Հայրենիք», 1955 թ., № 2—8)։

1942-ին Ֆլորենցիայից մեկնում է Հռոմ՝ գնալու Լիսաբոն, ապա Միացյալ Նահանգներ, 1943-ին Բոստոնում տպագրում է «Նավը լեռան վրա» վեպը, որը սկսել էր գրել Ֆլորենցիայում դեռ մինչև պատերազմը և նախատեսում էր հրատարակել իտալերեն թարգմանությամբ, սակայն իշխանությունները արգելեցին (վեպը ռուսերեն լույս է տեսել 1969-ին և 1974-ին, իսկ 1985-ին Պ. Տեր-Սարգսյանի կողմից թարգմանվել է ֆրանսերեն)։

1945-ից Զարյանը ֆրանսերեն և անգլերեն լեզուներով հայագիտություն է դասավանդում Կոլումբիայի համալսարանում, 1946-ին հրատարակում է «Armenian quarterly» (Հայկական քառամսյա) անգլերեն հանդեսը, որը հայ-ամերիկյան մշակութային միության գրական օրգանն էր և նպատակ ուներ պաշտպանել «Հայ արդար դատը»։ Հանդեսին թղթակցում են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հայտնի դեմքեր, «Սովետական Հայաստան» թերթում Կ. Զարյանը ուղագրավ մանրամասներ է հայտնում այս հանդեսի վերաբերյալ⁵⁰, Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ամերիկահայությունը, առանց կուսակցական խտրականության, կազմակերպվում է՝ հաղթող տերություններից պահանջելու Արևմտահայաստանի միացումը հորհրդային Հայաստանին։ Այդ գործին մասնակցելու համար հրավիրվում է նաև Զարյանը, որը և պայման է դնում, որ իրեն հնարավորություն տրվի հրատարակելու վերահիշյալ քառամսյան՝ ամերիկացիներին Հայաստանին և Հայկական հարցին ծանոթացնելու համար, Այս ընթացքում Զարյանը հայանպաստ ելույթ է ունեցել նաև բյուզանդասլավոնական կոնգրեսում, հանդիպել ամերիկյան սենատորներին և տարբեր երկրների դեսպաններին։ 1947-ին Իտալիայի հայ գաղութի կողմից նա ընտրվում է նյու Յորքում տեղի ունեցալիք Հայկական կոնգրեսի պատգամավոր։ 1948 թ. հոկտեմբերին Զարյանը վերադառնում է Ամերիկայից և 1949-ին կարճ ժամանակով լինում Ամստերդամում։ 1950-ին գրողը նորից Իտալիայում է։ Շուրջ 1 տարի ապրում է Ֆորիո կղզում։ 1952—1954 թթ. Լիբանանում արվեստի պատմություն է դասավանդում Բեյրութի Ամերիկյան համալսարանում և Փալանճյան հայկական ճեմարանում։ 1957 թ. ավարտում է «Հատված Տիգրան Մեծի թվելյաց երգից» պոեմը, որը տպագրվել է «Գիրք դուցազններգությանց» ժողովածուում։ Եվ նորից Ֆրանսիա, Իտալիա, Ամերիկա։

1961 թ. Զարյանը դառնի հետ գալիս է Հայաստան՝ շրջագայության։ Տպավորությունը մեծ էր։ Գրողը հայտարարում է, որ հորհրդային Հայաստանը հայության միակ իրական հայրենիքն է. «Ինչ տեսա Սովետական Հայաստանում՝ հրաշալի է, ոչ մի նկարագրությամբ չպիտի հավատալի այն ամենին, ինչ այստեղ սեփական աչքերով տեսա»⁵¹, Կարճ ժամանակ մնալով Հայաստանում՝ Զարյանը վերադառնում է Իտալիա։ 1962-ին Զարյանների ընտանիքը վերջնականապես տեղափոխվում է հայրենիք՝ իր հետ բերելով նաև գրողի գրական ողջ ժառանգությունը։ Ժամանակին իսպանացի վիպա-

⁵⁰ Սովետական Հայաստան, 17. V. 1968:

⁵¹ Սովետական Հայաստան, 1961, № 7, էջ 36:

գիր՝ Կ. Զարյանի մտերիմ Միգել դր Ունամունոն ևս տարագրվել էր իր երկրից, սակայն 1930-ին, երբ նա վերադարձավ հայրենիք, ամբողջ Մադրիդը դուրս էր եկել դիմավորելու Զարյանին, ցավոք, լռելյայն ընդունեցին ոչ միայն կուսակցական ու կառավարական շրջանակները, այլև շատ գրողներ ու մտավորականներ։ Պատճառները շատ էին՝ ղեկավար մարմինների դիրքորոշումը, գրական երկերին քիչ ծանոթ լինելը, գրողի գաղափարական ելևէջումները, նաև՝ շրջապատի գրական նախանձն ու մարդկային հոգու անհանդուրժողականությունը։ Այսուհանդերձ, Զարյանը հրճվում էր ի տես Երևանի և տասնյակ այլ քաղաքների ու շենքերի կառուցման և ամեն օր կոկիկ հագնված, մտավորականին հատուկ պահվածքով ու «անիշխանական կամքով» լեցուն՝ իր քայլերն ուղղում Ե. Զարենցի անվան դրականության և արվեստի թանգարան, որտեղ աշխատում էր որպես ավագ գիտաշխատող։ 1963-ին Երևանում տպագրվում է Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի երկրորդ տարբերակը, որի «խմբագրման» գործում «մեծ ներդրում» ունեցան Հր. Գրիգորյանն ու Ս. Թուփուլյանը։

1967-ից Զարյանը ԽՍՀՄ գրողների միության անդամ էր։ 1962-ից հետո Զարյանը դրեց շուրջ երեք հարյուր բանաստեղծություններ, հողվածներ ու նամակներ, վերահրատարակության պատրաստեց մի շարք գործեր, որոնք այդպես էլ նրա կենդանության օրոք լույս աշխարհ չեկան։ Բնութագրական է Հեկ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանին 1967 թ. գրած Կ. Զարյանի դիմումը, ուր տեղեկացվում է, որ երկու տարի առաջ Զարոբյանի նախագահությամբ որոշվել էր գրողի գլխավոր գործերը հրատարակել 7 հատորով, սակայն Գրողների միությունը ոչինչ չի արել։ «Ես, լինելով 82 տարեկան, չեմ կարող տարիներ սպասել։ գոնե գլխավոր գործերս տպված տեսնելու։ Ավելացնեմ, որ գործերիս տպագրության հարցով մտահոգված է նաև արտասահմանի հայությունը» (122)։ Դիմումից երևում է, որ արտասահմանից մի շարք առաջարկներ են եղել Զարյանի ամբողջական գործերը տպագրելու, սակայն գրողը չի համաձայնվել՝ նկատի ունենալով Հայաստանի քաղաքացի լինելու հանգամանքը։

1969 թ. դեկտեմբերի 13-ին մահացավ հայ գրականության և այս մշակույթի վերջին բանաստեղծությունը, որ մնաց կիսատ, նվիրված էր Բեթհովենին։ Իր կենդանության օրոք գրողը հրատարակեց ընդամենը չորս գիրք։ Մնացած գործերը սփռված են եղել հայ մամուլում։ Գրողի մահվանից հետո՝ 1975-ին, Անթիլիասում տպագրվեց նրա 5-րդ գիրքը, որտեղ ղեկավարված են երեք գործեր՝ «Անցորդը և իր ճամփան», «Արևմուտք», «Քաղաքներ»։ Երեք տարի անց՝ 1978-ին, Երուսաղեմում լույս տեսավ «Գիրք դյուցազններգության»-ը։ 1987 թ., դարձյալ Անթիլիասում, հրատարակվեց «Բանկոտպը և մամուլի ոսկորները» վեպը⁵²։ Ինչպես վկայում է Ստ. Կուրտիկյանը, Կ. Զարյանը ծրագրում էր գրել նաև իր կյանքի պատմությունը⁵³։ Ավելացնենք, որ գրողը մտադիր էր հրատարակել անտիպ բանաստեղծությունների ժողովածու և դրել իր հուշերը արևմտահայ գրողների մասին։

Զարյանը, ճակատագրի դաժան բերումով, ամենուր ապրեց մի տեսակ աքսորականի կյանքով։ Արտասահմանում տարագրյալ էր, մայք հայրենիքում՝ օտարական, հայ գրականությունից արտաքսված՝ ամբողջ տասնամյակներ։ Սկսած, եռակի մի հալածյալ։

⁵² Այս թվարկման մեջ չեն մտնում Ա. Պալիոլյանի՝ անգլերեն լեզվով լույս ընծայած գործերը, որոնց նյութերը ծաղկաթաղի սկզբունքով են տպագրված։

⁵³ Տե՛ս Ստ. Կուրտիկյան, նշվ. աշխ.

ТРИЖДЫ ИЗГНАННЫЙ (летопись жизни Костана Заряна)

А. А. АВАКЯН

Р е з ю м е

Разночтения и противоречия встречаются до сих пор не только в оценке творчества Костана Заряна, но и жизненного пути писателя. Биография Заряна многое объясняет в индивидуальном человеческом облике писателя, помогает выявить многие идейно-художественные особенности его творчества.

Волею судьбы К. Зарян везде жил жизнью ссыльного. За рубежом он был вынужденным эмигрантом, на родине—чужим, а из родной литературы был изгнан на десятилетия.

Жизнь великих писателей особенно поучительна в связи с национальными вопросами. Общественная и индивидуальная деятельность К. Заряна, осуществляемая им как за границей, так и на родине, еще раз доказывает: единственным критерием жизни в судьбоносную для народа и страны эпоху является служение родине.